նում ասելով «Մեացեալներն ալ պէտք գնեմ այն ստացուելու բո-
«ղերոքն»։ Աստուած յաջողութիւն տայ՝ որ երբեք տարիից կարողանաք
գնել։ Դարձեալ այսպիսի ազնիւ ձեռնարկութիւն արած է նաև Ախ-
ցխայի հռչակաւոր Եղիշէ վարժապետը Մեծատունեանց 1878 թուին
իւր Հայերէն լեզուի աշխարհաբար խօսակցութեամբ «ինքնուսոյց
«Քերականութիւն» յօրինած ժամանակը։ Այս պարոնը ի ձեռն Ախալցխայ
Հայ—կաթոլիկաց Վերափոխման Ս. Աստուածածնի եկեղեցւոյ վերակացու
քահանայի Շահինեանց, խնդրում է ինձ՝ որ ես ստորագրութիւն բանամ,
ես ըստ իմ կովբութեան ընդունելի սիրով այս առաջարկութիւնը և հաղիւ
կարողացայ 15· անձանց ստորագրել տալ, որ այս սակաւութեան պատ-
ճառը ի հարկէ Աստրախանու հայ բնակչաց անընթերցասիրութիւնն է, և
բաժանորդական թերթը հանդերձ եօթն բուրլի յիսուն կոպէկ բաժանոր-
դագնով ուղարկեցի Մեծատունեանցին։ Այս պարոնէն ես երկար ժամանակ
պատասխան չստացայ, գրեցի դարձեալ և կամեցայ յետաձգութեան
պատճառը իմանալ։ Նա 1878· թուին դեկտեմբերի 23 ին պատասխանում
է այսպէս։ «Զբաժանորդագինս օրինակացն այնոցիկ 7· բուրլի (բացա-
«ուութեամբ փոստայի ծախուց) զոր ստացեալ էի կանխաւ։ յայնժամ
«վերադարձուցանի յինէն առ Ձեզ ի հատուցանել մեծարգոյ բաժանոր-
«դաց։ յորժամ գերկասիրութիւնն մեր շիցէ ի լոյս ելանել թէև այսչափ
«յետաձգուեցաւ և գուցէ յամենցէ այլ ևս ամիսս երկուս կամ երիս...»
Պարոնի երկու ամսւայ վրայ անցաւ ամբողջ երկու տարի։ սակայն ամե-
նևին տեղեկութիւն չունիմ։ բայց շատ կարելի է պարոն Մեծատունեանցը
ամիս ասելով տարի է հասկանում։ և եթէ յիրաւի այդպէս է, պէտք է որ
մի տարի էլ սպասեմ։ որովհետև ասում է «և գուցէ յամենցէ այլ ևս
«ամիսս երկուս կամ երիս»։ Ի հարկէ այս իրողութիւնները շատ ցաւալի
են։ ցաւալի են ասում եմ։ ոչ թէ նորա համար՝ որ այլոց փողերն են
մէջ տեղը կորչում։ ոչ։ այլ նորա համար՝ որ իւրեանց գործող անձինք-
ները անհաւատարիմ են երևում մարդկութեան առաջ։ և որ առաւել
ողբալին է։ այսպիսի դէպքերը պատճառ են լինում ժողովրդեան դէպ ի
այսպիսի ձեռնարկութիւնները ունեցած եռանդը հանգցնելու։ որով եթէ
մի ուրիշ անգամ հարկ լինի մի այսպիսի գործ սկսել։ այն ժամանակ բո-
լորը հեռանում են ասելով։ «մենք աւելորդ փող չունենք այսպիսի ան-
«ազնիւ հոգւոյ տէր մարդկանց տալու» և իրաւացի է ժողովրդեան այս
խօսքերը՝ որ բացայայտ կերպով ցոյց են տալիս անսուտ սառնութիւն
դէպ ի ազգային գործերը։ և այս՝ շնորհիւ Պոյաճեանի նման երեսփոխան-
ների, քահանայ Օգսենտիանոսների և Մեծատունեանի նման պարոնի, սա-
կայն կարգին է պատկանում և երիտասարդ Ցոլնեաթանեանցը՝ որ մի ժամա-
նակ ծառայում էր Ս. Էջմիածնի Սինոդում՝ չգիտեմ քանի տարի յա-
ռաջ՝ մի հրատարակութեան ձեռնարկութեամբ դումար ժողովեց։ բայց
մինչև այսօրս ոչ մի տեղեկութիւն չստացուեցաւ նորա հրատարակու-
թեանց համար։ Ցաւալի՞ են յիրաւի այս դէպքերը և անպատճառ Դ—
—ՈՒՆՆ ՈՒՇԴՐՈՒԹԻՒՆ ԱՐԺԱՆԻ։

Յովսէփ Ա—ոգ Քահանայ Բոնկիրեանց.

ՀԱՇԻՒՑՈՒՅՑԱԿ ԱՄԵՆԱՏԵՍԱԿ ԾԱԽՈՒՑ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՄԱՑՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ
ՀԱՅՈՑ ՇԱՄԱԽԻՈՅ·

Եկեղեցին մինչեւ յատակագիծը քանդելու, քարն ու հողն առանձին առանձին հաւաքելու համար մշակաց տուաւ	359	90
Փայտեայ շինութիւնները, ժեշտեայ ծածկոցը վեր առնելու, դռներն ու լուսամուտները քանդելու եւ ապահով տեղ դնելու համար հիւսան վարձ տուաւ	33	46

Ճարտարապետին եւ նորա ոգնականին շինութեան վերայ նկատողութիւն անելու եւ նոր մակարդակ գծելու համար տուաւ. . .	299	
Հեռագիրներ, խնդրագիրներ զանազան անձանց եւ ատենատեղեաց վերայ ուղղորդելու գրոշմաւոր թղթեր եւ երկու հատ մատեաններ գնելու համար ծախսեցաւ	17	29
Բոլոր շինութեան ընթացքում ջուր բերելու եւ նորա աւազանը շինելու համար ծախսեցաւ	39	29
Եկեղեցու շինութեան սկզբից մինչեւ վերջը աշխատող քար ու ցեխ կրող մշակներին տուաւ	621	46
Եկեղեցւոյ բոլոր շինութեան վերայ աշխատող 252 որմնադիրներին .	271	5
62,624 հատարակ եւ անկիւնաքարեր տաշելու վարձ տուաւ . .	793	6
Պատերի փայտակապերը տաշելու եւ խորանների պատերի փայտաձաղերը գամելու համար տուաւ	180	40
Եկեղեցու փայտեայ խոշոր շինութիւնքը, տանիքի ծածկոյթը շինելու, կամարները կապելու, եւ ֆրոնտոնները շինելու համար տուաւ . .	562	41
Եկեղեցու միջի կամարները, սեղանի գլուխն եւ ֆրոնտոնների տախտակամած շինելու համար տուաւ	350	20
Եկեղեցւոյ տանիքը ու գմբէթները ժեշտապատելու համար տուաւ .	151	79
Նոյն ժեշտեայ ծածկոյթը, գմբէթները ֆրոնտոնները, խորանների եւ սեղանի առաջը ներկելու եւ բոլոր հարկաւորելիք նիւթերը գնելու համար ծախսեցաւ	274	33
Ժեշտի պակասորդը գնուեց 238 թերթ. եւ վճարուեց . .	279	86
Բոլոր լուսամուտները, դռները եւ նոցա շրջանակները (չարանկիւղքը) շինելու եւ ապակիքը քցելու համար տուաւ	252	5
Խորանների երկու պատրաստի դռներին տուաւ	15	
Պատերի փայտակապերին քսելու համար գնուեց նաւթ եւ վառ. 10 փ. եւ 14 ֆ. եւ տուաւ	11	5
Լուսամուտների համար գնուեց կարմիր 25½ արշ. 13 ր. եւ բոլոր կարմիզներն տաշելու համար տուաւ 54 ր. ընդամենն է . . .	67	
Սիւների վերայ հատ մեծ եւ հատ պատուանդանները գնելու եւ տաշելու համար տուաւ	39	70
Բոլոր շինութեան համար գործ դրուեց 143 փութ սկոպկայ մեծ եւ փոքր զանազան տեսակ գամեր, կապեր, օղեր, գնուեցան պտուտակներ, լուսամուտների եւ դռների պետլաներ եւ ուղղուեցան լուսամուտների երկաթները, որոց վճարուեց	377	17
Շինութեան համար գնուեց փայտակապերի համար (չարբանդացու) փայտ 1025 հատ, որոց 305 հատն վեց արշին, 491 հատն հինգ արշին եւ մնացեալն չորս արշին երկայնութեամբ, որոց վճարեցաւ . .	806	52
Եկեղեցւոյ զլուխն ծածկելու, սիւները կապելու եւ այլ հարկաւորութեանց համար գնուեց 254½ բրուս վեց վերշոկ հաստութեամբ եւ 13 արշին երկայնութեամբ, որոց ի գին վճարեցաւ . . .	873	50
Եկեղեցու կամարները, գմբէթները եւ ֆրոնտոնները տախտակամածելու համար գնուեց 746 հատ զանազան հաստութեան տախտակ, տուաւ .	1004	58
Բրուսներն Բաղուից գնել բերելու համար ճանապարհային ծախք եղաւ	52	32
Շինութեան վերակացուից վարձ տուաւ	99	51
Եկեղեցու բագն հարթելու համար տուաւ մշակաց . . .	59	80
Եկեղեցու շինութիւնը, որ ձմեռան պատճառաւ մնումէր, պատերն հողով եւ փէյինով ծածկելոյ համար ծախք եղաւ	14	18
Եկեղեցւոյ շինութեան համար սկզբից մինչեւ վերջն եղեւ զանազան գործիքների համար ծախք այն է՝ բահի, քլունկի, թիու, լամի, քեռամի, չանտալի, բեռնգիրի խարի եւայլն	70	82
Շինութեան համար գնուեց 2012½ փութ կիր (հակ) եւ տուաւ .	335	
Տասն սաժէն եւ 600 բեռն աւազի	107	
Կաշ 642 փութ	59	87
Խաչկալն իւր տեղը դնելու եւ ուղղացնելու համար ծախսուեց . .	26	
Եկեղեցւոյ պարիսպն նորոգելու համար ծախսուեց . . .	45	50
Եկեղեցւոյ օծման օրը կարգապահութեան համար հրաւիրած զինուորներին պարգեւ տուեց	8	
Վարձ տուաղչուն (ծերեղներին)	42	
Ընդամենն գումար ծախսուց է . .	8655	7

Դանօր.— Դախ նուիրատուութեան մատեանում ստորագրուած նուիրատուներից ոմանք իրանց ստորագրած նուէրքը լրիւ չեն վճարել այնէ՝ Յովհաննէս Բաղիրեանց 150 ր. Գէորգ Կաճկաճեանց 225 ր. Բախիշ Աստրգիսբեկեանց 40 ր. Մովսես Ալշուկեանց 100 ր. Յակոբ Կեօկչայեանց 100 ր. Կարապետ Սաղթէլեանց 5 ր. Յակոբ Քէր Մարտանեանց 15 ր. Պետրոս Պողոսեանց 6 ր. Սուքիաս Սուլթանեանց 2 ր. Ասլան Մայիլեանց 17 ր. 50 կ.

Սահակ Հայրիկ 25 ր. Բախիշ Վարդանեանց 10 ր. եւ Յարութիւն Եղաղաբեանց 6. ր. ընդ ամենն 741 ր. 50 կ. եւ այդ պատճառաւ այս գումարը չէ մտած այս ցուցակում նշանակած 8655 ր. 7 կ նուիրատուաց հաշւի մէջ։

Երկրորդ Բացի Ներսէսեանցի իրան սեփականութիւնից ծախած 926 ր. 45 կ. դրամից տուել է եւս փայտեղէն լուսամուտների եւ դռների գլխներն ծածկելոյ համար 152 հատ՝ գերան, որոց արժողութիւնն է 175 ր. որոնք գրված չեն նուիրատուաց ցուցակում ծախուց կարգում։

Երրորդ. Եկեղեցւոյ շինութեան Բոլոր ընթացքում Շամախաբնակ Աստիճանաւոր Մահմուտ բէկ Մամեդովն Հրիպապէտ տուաւ իւր սեփականական ջուրը գործ դնելոյ համար շինութեան վերայ, որով մեծ օգնութիւն հասցրաւ եկեղեցւոյն. Պարտք այսպիսի ջերմեռանդն նուիրագործութեան համար յայտնումենք խորին գոհունակութիւն։

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՆՈՐԱՇԷՆ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՀԱՅՑ ՇԱՄԱԽՒՈՅ.

Այս եկեղեցւոյ երկարութիւնն է 15 սաժէն և մի արշին, լայնութիւնը 9 սաժէն 1½ արշին, իսկ բարձրութիւնը 8½ արշին, սրբատաշ քարով շինուած, ներսից և դրսից ութ կարգ կաղնեայ գերաններով չարքանդ քցած ու երկաթեայ սկապկաններով ամրացրած, ունի 21 լուսամուտներ և չորս մեծ և երկու փոքր դռներ։ Զանգակատունը առանձին մասն է եկեղեցւոյն նոյնպէս սրբատաշ քարով և նոյն կարգաւ չարքանդներով շինուած, երկայնութիւնը 2 սաժէն կէս արշին, լայնութիւնը 3 սաժէն և ½ արշին, իսկ բարձրութիւնը մինչև տանիքը 2 սաժէն 2½ արշին, տանիքից սկսած բարձրութիւնը մինչև սարապիլը 4 սաժէն փայտեայ սրուքով. և սարապիլից մինչև խաչը 3 սաժէն 1 արշին. իսկ միջի լայնութիւնը 2 սաժէն։ Այս զանգակատունը կանգնացրածէ վեց վերշոկ հաստութեամբ բրուսներով՝ գլուխն ծածկած է ժեշտով և ներկած։

Եկեղեցւոյ մէջ վեց սիւներ կան շինուած, իւրաքանչիւրը չորս չորս հաստատդոյն բրուսներից, որոնք ծածկած են տախտակամածով ու ծեփած գաճով։

Մեծ կաթուղիկէի բարձրութիւնը տանիքից սկսած մինչև սարապիլը չորս սաժէն փայտեայ սրուքից, սարապիլից մինչև խաչը 3 սաժէն 1 արշին, միջի լայնութիւնն է 3 սաժէն. ունի ութ պատուհան ապակիները քցած, դրսից ծածկած ժեշտով և ներկած, իսկ ներսից տախտակամած ու ներկած. նմանապէս ամբողջ տանիքը ժեշտով ծածկած է ու ներկած. պատերի լայնութիւնը 1½ արշին։

Եկեղեցւոյ հարաւային և հիւսիսային կողմերում շինուած են գաւիթներ (փրոնտոններ) իւրաքանչիւրը չորս սաժէն մի արշին երկայնութեամբ և 5 արշին լայնութեամբ. գլուխները ծածկած ժեշտով ու ներկած, և առաստաղները գեղեցիկ տախտակամած։

Եկեղեցւոյ միջի առաստաղների տախտակամածի (օրշիվկաները) չորս մասից երեքը արդէն բոլորովին վերջացածեն։

Հոգաբարձուք Պօղոս Ներսէսեանց
Յովհաննէս Խալափեանց
Դաւիթ Գէորգեանց
Խաչատուր Եղիազարեանց

Մի այսպիսի հոյակապ եկեղեցւոյ ի հիմանց վերանորոգութիւնը 8655 րուբլի 7 կ. գումարով ի գլուխ տանելը մի այնպիսի յայտնի ապացոյց է Մեծ. Հոգաբարձուաց հաւատարիմ եւ արդիւնաւոր աշխատութեանը, որը անշուշտ արժանի է թէ Շամախւոյ հայ հասարակութեան եւ թէ մեր հրապարակական խորին եւ անկեղծ շնորհակալութեանը։